

ՀՍՍՌ ԳԵՏԱԿԱՆ ՇԵՐԱՄԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԵՌԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՂ

ԱՌՎԲԵԼ ԱՌՎԲԵԼՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Առաջին մաս

Դ ա ս Լ

Հայկական այբուբենը կազմվել է 5-րդ դարում հունական այբուբենի դասավորությամբ: Այբուբեն կոչվել է առաջին երկու տառերի՝ այբ-ի (ա) և բեն-ի (բ) անունով:

Հայկական այբուբենն սկզբում 5-րդ դարում բաղկացել է 36 տառից: Իսկ ուշ շրջանում ավելացել է նաև երկուսը՝ Օ-ն և Փ-ն: Այսպիսով նախահայտնաբերյալ շրջանի այբուբենն ունեցել է 38 տառ: Հոկտեմբերյան օեփուլայից հետո հայկական այբուբենի մեջ որոշ փոփոխություն մացվեց: Այժմ էլ գործական է նույն այդ այբուբենը:

Հայկական այբուբենը 5-րդ դարից սկսած երկար ժամանակաշրջանում կիրառվել է նաև որպես թիվ, որովհետև հայերը, ինչպես և հույները և շատ ուրիշ ժողովուրդներ, այն ժամանակ չեն ունեցել հատուկ թվանշաններ:

Գրաբարի այբուբենը

այբ (ա)—1	մէ (մ)—10	հէ (հ)—100	առ (ա)—1000
բեն (բ)—2	խի (խ)—20	մեն (մ)—200	ու (ւ)—2000
գիմ (գ)—3	լուս (լ)—30	հի (ի)—300	վեվ (վ)—3000
դա (դ)—4	խե (խ)—40	նու (ն)—400	այուս (ա)—4000
եշ (ե)—5	ծա (ծ)—50	շա (շ)—500	բէ (բ)—5000
զա (զ)—6	կեն (կ)—60	վա (ւ)—600	ցա (ց)—6000
է (է)—7	հա (հ)—70	շա (շ)—700	հյուս (ւ)—7000
ըթ (ը)—8	ձա (ձ)—80	պէ (պ)—800	փյուր (փ)—8000
թա (թ)—9	դառ (դ)—90	ջի (ջ)—900	թէ (թ)—9000

Հետագայում ավելացել է՝

Օ

Փի (փ):

Գրաբարում ամեն մի հնչյուն ունեցել է մի գիր և բառը գրվել է այնպես, ինչպես որ արտաբերվել է։ Այսպես՝ արտաբերվել է մարդ, վարդ, զարդ, ոսկի, ծառայ և այդպես էլ գրվել է։ Սակայն ժամանակի ընթացքում փոխվել է արտաբերությունը, իսկ գրությունը մնացել է նույնը և սրանից առաջացել է այն խոշոր տարբերությունը, որ ներկայումս գոյություն ունի արտաբերման և գրության միջև։ Այսպես, գրաբարի զարգացման հետագա շրջանում գրել են մարդ, վարդ, զարդ, որդի կարդ և այլն, բայց կարդացել՝ մարթ, վարթ, զարթ, վորթի, կարթ և այլն։ Այս նույն (զարթ, վարթ) արտաբերությամբ կարդացվել են և այժմ էլ շարունակվում են կարդացվել գրաբար լեզվով գրված գրքերը։

Մեկը.—«Գրաբար» բառի ուղղագրությունը տարբեր է եղել։ Սկզբում այդ բառը համարվել է բարդ՝ կազմված գիր և բառ միացությունից և գրվել է ուով՝ գրաբառ, բայց հետագայում այդ բառը մակբայական իմաստ է ստացել և գրվել ուով՝ գրաբար (որ նշանակում է գրքի լեզվի պես), ինչպես՝ աշխարհարար, ընկերարար, հերոսարար և այլն։ Գրաբարի արդիական արտաբերումն սկսվել է XI—XII դարերից և շարունակվում է մինչև այսօր։

Թե գրաբարում և թե աշխարհարարում հնչյունները բաժանվում են երկու խմբի՝ ձայնավոր և բաղաձայն։

Ձայնավորներ են՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու։

Ուշ շրջանում (միջին դարում), հայկական այբուբենի մեջ է մտել օ տառը, որը մինչ այդ գրվել է աւ կամ ու։ Այսպես՝ գրվել է աւ, բայց կարդացվել՝ օ։ Օրինակ՝ աւրինաց=օրինաց, աւր=օր, հաւր=հօր, մաւր=մօր, զաւրաւք=զօրօք և այլն։ Օ տառի մուտք գործելուց հետո չի գրվել հաւր, մաւր, զաւրաւք, այլ ուղղակի՝ հօր, մօր, զօրօք և այլն։ Այս գրությունն ձևը գործածական է նաև արդի գրաբարի ուսուցման մեջ։

Բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, ը, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, և այլն։

Հին հայերենում ֆ բաղաձայնը չի եղել։ Այս հնչյունը հայերենի մեջ մտել է միջին դարում հայերի և եվրոպական ժողովուրդների փոխադարձ առնչության քաղաքական շփման հետևանքով։ Մինչև այդ օտարազգի բառերի ֆ հնչյունին փոխարինել է հայկական փ հնչյունը։

Բացի ձայնավորներից ու բաղաձայններից գրաբարն ունեցել է նաև դիֆթանգներ (երկհնչյուններ)։

Դրանք են՝

Այ—հայր, մայր, եղբայր (հայր, մայր, եղբայր)։

Ոյ—բոյս, թոյն, գոյն (բույս, թույն, գույն)։

Աւ—ամաւթ, հաւր, մաւր (ամառթ, հաուր, մաուր)։

Եա—մանեակ, ատեան (մանյակ, ատյան)։

Իւ—նիւթ, հիւթ (նյութ, հյութ)։

Իո—պատանու, որդւո (պատանու, վորդու)։

Եաւ—պատանեաւ, բարեաւ (պատանյաու, բարյաու)։

Իոյ—ցորենւոյ, գինւոյ (ցորենույ, գինույ)։

ԳՐԱԲԱՐԻ ԱՐԴԻ ԱՐՏԱԲԵՐՈՒՄԸ

Ե ԶԱՅՆԱՎՈՐ

Ն ձայնավորը բառասկզբում արտաբերվում է որպես յե։ Երկու, եզ, երկիր, երկ, երկունք և այլն։

Ն ձայնավորը բառամիջում արտաբերվում է որպես ե։ Օրինակ՝ երեք, երգեն, վսեմ, վեհ, աշագեղ։

Ն ձայնավորը բառավերջում չի արտաբերվում։ Բառավերջում չի գրվում ե։

Է ԶԱՅՆԱՎՈՐ

Է ձայնավորը գործածվում է բառասկզբում, բառամիջում և բառավերջում։ Բոլոր դեպքերում է հնչյունի արտաբերումը նույնն է։ Օրինակ՝ էակ, սէր, պարէն, բազէ, բոպէ և այլն։

Բառամիջում է դիրը գրվում է այն դեպքում, երբ բառի աճման ժամանակ «ե» հնչյունը փոխարինվում է «ի» հնչյունով։ Օրինակ՝ սէր=սիրել, տէր=տիրել, սեզ=սիզապանծ, սեզ=սիզապիտ և այլն։

Է ձայնավորն սկզբում եղել է երկհնչյուն և կազմված է եզել և յ միացությունից։ Օրինակ՝ գրեյ=զրէ, երգեյ=երգէ և այլն։

Ո ԶԱՅՆԱՎՈՐ

Ո ձայնավորը հին ժամանակ արտաբերվել է ուօ, իսկ այժմ արտաբերվում է վօ։

Ա ձայնավորը բառասկզբում միշտ արտաբերվում է վա-
Օրինակ՝ որս (վորս), ոչ (վոչ), ոչխար (վոչխար)։ Բացառությամբ
են կազմում հետևյալ բառերը՝ ով, ովսաննա, ոագիս, ովկիանոս։
Այս բառերի սկզբում ո-ն հնչվում է իբրև Օ. այսպես՝ Օվ, Օվ-
սաննա, Օագիս, Օվկիանոս։

Ա ձայնավորը բառամիջում և բառավերջում արտաբերվում
է Օ։ Օրինակ՝ որսորդ, հով, կով, մարմնո(յ), գետո(յ), սիրո(յ)
և այլն։

Ա ձայնավորը վ բաղաձայնից առաջ միշտ արտաբերվում
է Օ, իսկ ա-ի հետ կարգացվում է ա։ Օրինակ՝ մարմնով, հրով,
բայց ծովու, խրատու և այլն։

Ա ձայնավորը հին գրաբարում արտաբերվել է Օ, բայց
հետո փոխվել է վա-ի։

Ը ՁԱՅՆԱՎՈՐ

Ը ձայնավորը թե գրաբարում և թե աշխարհաբարում մի-
ակ արտաբերությամբ ունի։

Ը գիրը գրաբարում գրվում է միայն բառասկզբում և բա-
հյում։ Օրինակ՝ ընկալ, ընդունայն, անըմբեր (անհամբեր),
մրն (անհարմար) և այլն։ Բառավերջում չի գրվում։

Օ ՁԱՅՆԱՎՈՐ

Օ ձայնավորին համապատասխանում է այժմվա աշխարհա-
բարի ա ձայնավորը։

Օ գիրը գրվում է բառասկզբում և բառամիջում։ Օրինակ՝
պաշտոն, գործ, օգնական, օժանդակ, օձտել (բաժանել), հօր, մօր
և այլն։

Օ գիրը բառավերջում չի գրվում։

Յ ԿԻՍԱԶԱՅՆ

Յ կիսաձայնը ի ձայնավորի տարրերակն է (վարիան-
տը)։

Յ կիսաձայնը բառասկզբում և բառամիջում արտաբերվում
է ինչպես աշխարհաբարի Ե հնչյունը։ Օրինակ՝ Յովհաննէս, Յա-
գրվք, յարմար, յանկարծ=չովհաննէս, չակովք, հարմար, հան-
ւծ և այլն։

Յ կիսաձայնը բառերի վերջում ո և ա ձայնավորներից հետո
գրվում է, բայց չի արտաբերվում։ Օրինակ՝ գրում ենք գործոյ-
գետոյ, սիրոյ, ծառայ, վրայ, կարգայ, զարմանայ, բայց կարդում
ենք գործո, գետո, սիրո, ծառա, վրա, կարգա, զարմանա և այլն։

Յ կիսաձայնը միանալով ա ձայնավորի հետ կազմում է
այ երկհնչյունը, որը բոլոր դեպքերում արտաբերվում է այ։ Օրի-
նակ՝ այսօր, մակրայ, կարգայցեմ, զարմանային և այլն։

Ի ԿԻՍԱԶԱՅՆ

Ի կիսաձայնը չի համապատասխանում վ հնչյունին, որով-
հետև ա-ը կիսաձայն է, իսկ վ-ը՝ բաղաձայն։

Ի կիսաձայնը գրվում է միայն բառամիջում և բառավեր-
ջում։ Բառասկզբում չի գրվում։

Ի կիսաձայնը բոլոր ձայնավորներից հետո, բացի ա-ից-
կարգացվում է վ։ Օրինակ՝ հաւ=հավ, նաւ=նավ, կաւիւն=կավիւն,
կարդացվում է վ։ Օրինակ՝ հաւիւն=հավիւն, բանիւ=բանիւ, կոիւ=կոիւ,
շաւիղ=շավիղ, տաւիղ=տավիղ, բանիւ=բանիւ, արծիւ=արծիւ, թիւ=թիւ և
պատիւ=պատիւ, անիւ=անիւ, արծիւ=արծիւ, թիւ=թիւ և
այլն։

Ի կիսաձայնը ձայնավորից առաջ արտաբերվում է վ, իսկ
բառավերջում միանալով ի ձայնավորի հետ արտաբերվում է իվ։
Օրինակ՝ որդւոց=որդվոց, ոգւոց=ոգվոց, ասորւոց=ասորվոց,
արծիւ=արծիւ, բանիւ=բանիւ, սրտիւ=սրտիւ և այլն։

Ի կիսաձայնը միանալով ի ձայնավորի հետ՝ բառասկզբում
և բառամիջում արտաբերվում է յա։ Օրինակ՝ իւր=յուր, իւրով
=յուրով, իւրաքանչիւր=յուրաքանչյուր, կորիւն=կորյուն, ար-
իւն=արյուն, քաջութիւն=քաջություն, արութիւն=արություն և
այլն։

Վ ԲԱՂԱԶԱՅՆ

Վ բաղաձայնը գրվում է բոլոր դեպքերում։ Բառասկզբում,
բառամիջում և բառավերջում։

Նթե բառն սկսվում է վ-ով, գրվում է վ։ Օրինակ՝ վեհ,
վսեմ, վէս, վասն և այլն։

Բառամիջում վ գրվում է այն ժամանակ, երբ բառը
բարդ է և երկրորդ բաղադրիչն սկսվում է վ հնչյունով։ Օրինակ՝
արօտավայր, բնակավայր, հրավառ, բոցավառ և այլն։

Ա ձայնավորի հետ լսվող վ հնչյունը բոլոր դեպքերում

գրվում է վ և ոչ թեւ, որովհետեւ ուի ևւի միացությունը
կազմում է ու: Օրինակ՝ հրով, գրով, մարմնով, գովել և այլն:

ԵՐԿՀՆՁՅՈՒՆՆԵՐ

Ս և ա հնչյունների եւ միացությունն արտաբերվում է
եւ (յա): Օրինակ՝ մատեան=մատյան, ատեան=ատյան, միջ-
օրեայ=միջօրյա, առօրեայ=առօրյա և այլն:

Ե Ա Յ

Սայ միացությունն արտաբերվում է եւ (յա): Օրինակ՝
սակեայ=սակյա, կճեայ=կճյա, հաղարամեայ=հաղարամյա, բաց-
օթեայ=բացօթյա և այլն:

Ո Յ

Ոյ երկհնչյունը համապատասխանում է աշխարհարարի նույն
երկհնչյունին և նույն արտաբերությունն ունի:

Բառակերպում, բառամիջում բաղաձայններից առաջ ար-
տաբերվում է ոյ: Օրինակ՝ բոյս=բույս, լոյս=լույս, յոյս=հույս,
ծոյլ=ծույլ, բոյլ=բույլ և այլն:

Բառավերջում, ինչպես և ձայնավորից առաջ, արտաբեր-
վում է օյ: Օրինակ՝ բարոյական, հաճոյական, գլխոյական, գո-
ռոյ, նոյ և այլն:

Ե Օ

ՍՕ երկհնչյունը համապատասխանում է աշխարհարարի յօ-
ին: ՍՕ միացությունը գրաբարում գրվել է եւա (յավ): Օրինակ
կարծեաք—կարծեօք=կարծյօք, արդեաք—արդեօք=արդեյօք
պատանեաք—պատանեօք=պատանյօք և այլն:

Ե Ի

ՍԷ երկհնչյունն արտաբերվում է յեվ: ՍԷ երկհնչյունը բա-
ղաձայնից առաջ արտաբերվում է իւ: Օրինակ՝ առեւծ=առիւծ
(առյուծ), գեւղ=գիւղ (գյուղ) և այլն:

Դ ա ս Բ

Թ Ի Վ

Թիվը հիմնականում արտահայտում է քանակ, որը կարող է
լինել մեկ կամ մեկից ավելի:

Բացի իր այս հիմնական ֆունկցիայից Թիվն արտահայ-
տում է նաև բառերի փոխադարձ հարնչությունը խոսքի մեջ:
Այս հարնչությունը (բառահարաբերությունը) արտահայտելու
համար բառն ստանում է որոշ մասնիկներ: Դրանք են՝ ք, ց,
ս, ետ, քի և այլն: Օրինակ՝ բանք, նոցա, գործս, որևար, մանկ-
քի (խոսքեր, նրանց, իշխաններ, մանուկներ) և այլն:

Թիվը գրաբարում, ինչպես և աշխարհարարում, երկու է՝
եզակի և եռյակի:

Եզակին նման է աշխարհարարին:

Դրաբարում կան բառեր, որոնք եզակի չունեն: Այսպիսի
բառերը կոչվում են անեզակաթիվ: Օրինակ՝ միտք, խելք, աչք,
փառք, զօրք և այլն:

Անեզակաթիվ բառերը գրաբարում հոգնակի են թե՛ ձևով և
թե՛ բովանդակությամբ: Այս բառերն աշխարհարարում դարձել
են եզակի թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ:

Դրաբարում կան բառեր, որոնք չունեն հոգնակի: Այսպիսի
բառերը կոչվում են անեռյակաթիվ: Դրանք են՝ լոյս, խաւար, սէր,
սուգ, խիզճ, յուսին, արև, յոյս (հույս), վաղիւ, հիւսիս (հյուսիս)
հանգիստ, երկիւղ և այլն: Բոլոր հատուկ անունները նույնպես
անհոգնական են:

Դրաբարում հոգնակին կազմվում է մի շարք մասնիկների
միջոցով, որոնք ավելանում են անմիջապես բառավերջում:

Այդ մասնիկներն են՝ ք, ս և ց:

ա) Դ ավելանում է եզակի սեղանակաթի և զործիտկաթի վեր-

ջում:

Օրինակ՝

Եղակի ուղղ.—բան, գործ, թույլ, սիրտ:
 Հոգնակի : —բան, գործ, թույլ, սիրտ (խոսքեր, գործեր, թույլներ, սրտեր) և այլն:
 Եղակի գործ.—գործով, գետով, մարմնով:
 Հոգնակի : —գործով, գետով, մարմնով (գործերով, գետերով, մարմիններով) և այլն:
 բ) Ա ավելանում է հայցականի վերջում և կազմում հոգնակի հայցական: Օրինակ՝
 Եղակի հայց.—բան, սիրտ, սեղան, գանձ և այլն:
 Հոգնակի : —բան, սիրտ, սեղան, գանձ և այլն:
 Մտնոր.—Հոգնակի հայցականը պետք է կարգալ՝ բան, սիրտը, սեղանը, գանձը և այլն:
 գ) Յ ավելանում է եղակի սեռականի վերջում և կազմում գնակի սեռական: Օրինակ՝
 Եղակի սեռ.—բանի, տասեղ, հնգի, տխտանայ և այլն:
 Հոգնակի : —բանից, տասեղց, հնգից, տխտանայց:

արժույթուն

Հետևյալ բառերը դարձնել եղակի ուղղակի և հայցակի
 ներս, նամակ, զիր, ուսանող, աշակերտ, ուսուցիչ, մատնան, մշակ, դաշտ, ջուր, քաջութիւն, գորութիւն, դեռ, մարմին, տուն:
 Բացի հոգնակիի այս վերջավորութիւններից զբարարում կան մի շարք մասնիկներ, որոնք զրգելով բառավերջում արտահայտում են ետադարձակ իմաստ և նույնպէս կազմում հոգնակի թիվ: Այդ մասնիկներն են՝
 ա) ետր—որեւոր (իշխաններ), բանեւոր (խոսքեր), խոզեւոր (խոզեր), իշեւոր (էշեր) և այլն: Սար մասնիկի ա ձայնավորը սղգելով դարձել է աշխարհաբարի եր հոգնականացուցիչը:
 բ) Սեւոր—բարձկնեւոր (բարձիկներ), նաւկնեւոր (նավակներ) և այլն:
 Ղեւոր մասնիկի ա ձայնավորը սղգելով ստացվել է աշխարհաբարի մեր հոգնականացուցիչը:
 գ) Ետն—նախարարեմ, թղթեմ, բերդեմ, Գրիգորեմ (նախարարներ), (թղթեր), (բերդեր) և այլն:
 դ) Եմի—աւագանի, ազատանի, կանանի և այլն (ազադներ), (ազատներ) (կիներ) և այլն:
 ե) Ումբ—մանկունք, երիցունք, Եպիսկոպոսունք և այլն (մանուկներ), (երեցներ), (Եպիսկոպոսներ) և այլն:

դ) որեւի—արտոր-եայ, վանոր-եայ=արտեր, վանքեր են:
 է) Եյբ—դաշտոր-այք, վանոր-այք, արտոր-այք և այլն (դաշտեր), (վանքեր), (արտեր) և այլն:
 ը) Եի—մանկ-տի, ծակ-տի և այլն (մանուկներ), (ծակեր) և այլն:
 թ) Եկեմ—զոր-ական, զբաստ-ական, զուսան-ական և այլն (զորականներ), (զբաստներ), (զուսաններ) են:
 Հաճախ տի, եար, ահան մասնիկներին ավելանում է Բ հոգնականացուցիչը և կազմում կրկնակի հոգնակի: Օրինակ՝ մանկ-տի, արտոր-այք, վանոր-այք, զոր-ական և այլն:

ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Էական բայերը քերականութեան մեջ անվանվում են նաև օժանդակ:
 Գրաբարում էական բայերը երեք են՝ ել կամ իլ, ալ, ուլ:
 Ել (իլ), ալ, ուլ մասնիկներն առանձին վերցրած իմաստ չունեն. բայց ավելանալով բառավերջում՝ բառին տալիս են շարժման կամ սլոգիսի իմաստ: Այսպէս՝ խոսք+ել=խոսել, խաղ+ալ=խաղալ, թող+ուլ=թողուլ (թողնել), ետնել, խաղալ, բողոլ անորոշ գերբայներ են, որոնք արտահայտում են սոսկ գործողութիւն:
 Ել (իլ), ալ, ուլ ձևերի մեջ և (ի), ա, ու կոչվում են էական բայի ելմէ, իսկ լ-ն՝ վերջավորութիւն: Ել (իլ), ալ, ուլ միացութիւնները զբարարում կոչվել են նաև լծորդութիւն: Ե (ի), ա, ու ձայնավորներով որոշվում է խոնարհման բնույթը և այդպէս կոչվում է (ի), ա, ու խոնարհում:
 Էական բայերի խոնարհումը կարեւորագույն նշանակութիւն ունի խոնարհման մեջ, որովհետեւ զբարարի բայերի խոնարհումը նույնն է, թե էական բայի խոնարհում:
 Էական բայերի խոնարհման մեջ որոշակիօրէն արտահայտված է գեմքը, թիվը, ժամանակը:
 Էական բայերի վերջավորութիւններն ըստ գեմքի՝

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

Եղակի բիվ	Հոգնակի բիվ
1-ին գեմք—մ	մք
2-րդ —ս	սք
3-րդ —յ	ն

Այս վերջախորութուններն ախլանում են ել (իլ), ալ, ուլ
 էական, բայերի ե (ի), ա, ու հիմքին և ստացվում է հետևյալը՝

ե Ա ՈՒ

Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգն.	Եզակի	Հոգն.
I գեմք՝ ե-մ (իմ)	ե-մք(իմք)	ա-մ	ա-մք	ու-մ	ու-մք
II » ե-ս (իս)	ե-յք(էք)(իք)	ա-ս	ա-յք	ու-ս	ու-յք
III » ե-յ (ի)	ե-ն (ին)	ա-յ	ա-ն	ու-յ	ու-ն

(=է)
 Ե խոնարհման մեջ եզակի երրորդ գեմքի էյ միացու-
 թյունն արտաբերվել է և և զրվել է հետագայում է, այս խո-
 նարհման հոգնակի երկրորդ գեմքը նույնպես պետք է կարդալ
 էթ և ոչ թե էյք:

Ա խոնարհման եզակի երրորդ գեմքի յ կիսաձայնը չի
 հնչվում, պետք է կարդալ պարզ ա:

Ու խոնարհման մեջ եզակի 3-րդ գեմքում և հոգնակի երկ-
 րդ գեմքում յ կիսաձայնը դուրս է ընկնում: Հոգնակի երկ-
 րդ գեմքը ունի 2 ձև՝ ումք և ույք (թողումք կամ թողույք):
 Իբարում զԱյժ մասնիկը գրվում է ոյք (թողոյք):

էական բայերի ներկա ժամանակի այս երեք ձևերը (եզա-
 և հոգնակի) միանալով որևէ դոյականի, անականի կամ մակ-
 սյական արմատի հետ կազմում են բայերի խոնարհման ցեր-
 ան ժամանակի: Այսպես՝

ե (ի)

(Խոնարհում)

Ազատ-ել (իլ)

Ա

(Խոնարհում)

կարդ-ալ

ե Ձ Ա Կ Ի Թ Ի Ի

ազատ-ւմ (ազատում եմ)
 ազատ-ես (ազատում ես)
 ազատ-է (ազատում է)

կարդ-ւմ (կարդում եմ)
 կարդ-աս (կարդում ես)
 կարդ-այ (կարդում է)

ազատ-իմ (ազատվում եմ)
 ազատ-իս (ազատվում ես)
 ազատ-ի (ազատվում է)

Ու (Խոնարհում) Թող-ուլ
 Թող-ում (թողնում եմ)
 Թող-ուս (թողնում ես)
 Թող-ու (թողնում է)

Յ Ո Ք Ն Ա Կ Ի Թ Ի Ի

ազատ-ւմք (ազատում ենք)
 ազատ-էք (ազատում էք)

կարդ-ւմք (կարդում ենք)
 կարդ-այք (կարդում էք)

ազատ-են (ազատում են)
 ազատ-իմք (ազատվում ենք)
 ազատ-իր (ազատվում էք)
 ազատ-ին (ազատվում են)

կարդ-ան (կարդում են)
 Թող-ումք (թողնում ենք)
 Թողուք կամ Թողոյք (թող-
 նում էք)
 Թողուն (թողնում են)

Վարժություն

Խոնարհել (ներկա ժամանակով) հետևյալ բայերը՝
 զրել (զրիլ), սիրել (սիրիլ), յաղթել (յաղթիլ)=հաղթել, հաղթիլ
 առնել (առնիլ) հրամայել (հրամայիլ), խոկալ, տոկալ, դալ, եր-
 թալ, դարձանալ, հեղուլ, կիզուլ (այրել), զարթնուլ

Թարգմանե՛ք աշխարհաբար

Հոյակապ և լուսաւոր են քաղաքք մեր: Անձայրածիր են
 դաշտք և արտորայք մեր: Մեծ և գեղեցիկ է ծով: Ո՞վ ես դու
 Ո՞վ է, որ դալ Յձ երթաս: Ելանեն լեռնանան, իջանեն դաշ-
 տանան: Թողումք և երթամք, Յաղթեմք և կործանեմք զթշնա-
 միս մեր: Հալածականս առնեմք զթշնամիս, հակառակորդս մեր՝
 Ընդէ՛ր արգելուս: Թշնամիք մեր կործանին: Գան, հասանեն զօ-
 բականք մեր և փախստականս առնեն զթշնամիս մեր:

Լուսաւոր—լուսավոր
 Քաղաքք—քաղաքք
 Քաղաքք մեր—մեր քաղաքները
 Դաշտք—դաշտք
 Արտորայք մեր—մեր արտերը
 Յձ—սիր
 Ելանել—ելնել
 Լեռնանալ—լեռ դառնալ
 Դաշտանալ—դաշտ դառնալ
 Յաղթեմք—հաղթեմք
 Զթշնամիս—ըզթշնամիս
 Զթշնամիս մեր—մեր թշնամի-
 ներին

Հալածականս առնել—հալածել
 Զհակառակորդս (ըզհակառա-
 կորդս) մեր—մեր հակառա-
 կորդներին

Ընդէ՛ր—ինչո՞ւ
 Արգելուլ—արգելիլ, խափանել
 Կործանիլ—կործանվել
 Հասանել—հասնել
 Զօբականքն մեր—մեր կտրիճ
 զինվորները, մեր զորքերը
 Փախստականս առնեն—փախ-
 ցնում են

2 0 1 0 2 0 1 0 1 0

Երկրորդականը, զոր-
 եզակի սեռակամը կազմելու համար բառի եզակի ուղղա-
 անին ավելանում են ա, ի, ու մասնիկները: Օրինակ՝

անձը, որը խոսքի կամ նախադասութիւնի մեջ հասկեր-
գործողութեան օբյեկտը (կրող առարկան, ուղիղ խնդիրը): Օ.

Հայցական հոլովով գրված բառը սովորաբար սկզբից ունենում է գ. որը կոչվում է Եփեղիմի Օրինակ՝

Ուղ.—հաց, սիրտ, գործ, նա, այս

Հայց.—զհաց, զսիրտ, զգործ, զնա, զայս և այլն

2. Նախդիրը բառակազմում կարգացվում է ըզ. եթե բառն սկսվում է բաղաձայնով։ Օրինակ՝ զհաց—ըզհաց, զսիրտ—ըզսիրտ, զգործ—ըզգործ, զնա—ըզնա։ Իսկ եթե բառն սկսվում է ձայնավորով, զ արտաբերվում է որպես պարզ գ. այսպես՝ զայս, զնա, զԱննա, զարուսեակ, զանաղատ և այլն։

Հայցական հոլովը գրաբարում, ինչպես և աշխարհարարում, երկու կիրառություն ունի՝ սրոյշալ և անորոշ։

ա) Սրոյշալ հայցական, եթե առարկան սրոյշալ է, հայցական հոլովով գրված բառն սկզբից ստանում է գ նախդիրը։ Օրինակ՝ զմարդ, զսեղան (մարդը, սեղանը) և այլն։

բ) Անորոշ հայցական, եթե առարկան անորոշ է, հայցական հոլովով գրված բառն սկզբից չի ստանում գ նախդիրը։ Օրինակ՝ մարդ, սեղան և այլն։

Եզակի հայցականը ձևով նման է ուղղականին, ինչպես աշխարհարարում։ Օրինակ՝

Ուղղ. տուն, այր, քաղաք և այլն։

Հայց. տուն, այր, քաղաք և այլն։

Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից բառավերջի ք բաղաձայնը փոխարինվելով ւ բաղաձայնով։ Օրինակ՝

Ուղղ.

Հայց.

բանք, ժիրտք, քաջք, գործք, անորոշ—բանս, սիրտս, քաջս, գործս, սրոյշալ—գրանս, զսիրտս, զքաջս, զգործս

2. Նախդիրով հայցականը կոչվում է որոշալ հայցական, իսկ առանց գ նախդիրի՝ անորոշ։

Հանախ հայցական հոլովը կիրառվում է նաև առ մասնիկով և ց. ի կամ յ գրեթով, որոնք նույնպես նախդիրներ են կոչվում։ Այս դեպքում գ նախդիրը չի գրվում։ Օրինակ՝ առ նա, ցայս վայր, ի քաղաքն, յաշխարհն և այլն։ 2 և յ նախդիրները գրվում են բառի հետ միացած, իսկ ի նախդիրը—անջատ, առանձին։

Բոլոր գերանունները հայցական հոլովում ունեն գ նախդիրը, որովհետև գերանունները չունեն աշխարհ ձևեր։ Օրինակ՝ չի կարելի ասել նա, նոսա, իս, այստեղ, այլ պետք է ասել զնա, զնոսա, զիս, զայստեղ։

Բացառական հոլովը պատասխանում է յուսմե՞, ուստի՞ (ուսմեց, ինչից) հարցերին։ Օրինակ՝ ի նմանե՞ (նրանից), ի քաղաքե՞ (քաղաքից) և այլն։

Բացառական հոլովը կազմվում է սովորաբար եզակի և հոգնակի սեռականից և բառակազմում ընդդռնում ի կամ յ նախդիրը։ Օրինակ՝

Յոգնակի

Եզակի

Սեռ. զաշտաց, զհետց, իմաստնոյ, Աբամայ
Բաց. ի զաշտաց, ի զհետց, յիմաստնոյ, յԱբամայ
(զաշտերից), (զհետերից), (իմաստունից), (Աբամայի)

Ի նախդիրը գրվում է այն ժամանակ, երբ բառն սկսվում է բաղաձայնով։ Օրինակ՝ ի քաղաքե (քաղաքից), ի նմա (նրա մեջ), ի բանե (խոսքից), ի գործոյ (գործից) և այլն։

Յ նախդիրը գրվում է այն ժամանակ, երբ բառն սկսվում է ձայնավորով։ Օրինակ՝ յԱբամայ (նԱբամայ)—Աբամայ, յաշխարհի (հաշխարհի)—աշխարհում, յոսկւոյ (հոսկւոյ)—ոսկուց և այլն։

Ի նախդիրը գրվում է առանձին, իսկ յ նախդիրը—միացած բառի հետ։

Յ նախդիրը նույն ի նախդիրն է։
Յ նախդիրը հատուկ անունների հետ գործածվելով գրվում է բառի հետ միացած և փոքրատառ, իսկ հատուկ անունը պահպանում է մեծատառը։ Օրինակ՝ յԱրշակայ, յԱսիայ, յԱննայե և այլն։ Վերջակետից հետո կամ նոր սկսվածքի ժամանակ, ի հարկե, յն գրվում է մեծատառ։

Ի կամ յ նախդիրը բացառականի համար քննարկի մասին է կազմվի։

Ի, ու, ան, եան, հոլովման, ինչպես և ետր-ետդ (եր-եդ) ի, ու, ան, եան, հոլովման, ինչպես և ետր-ետդ (եր-եդ) կազմությունն ունեցող բառերի բացառականը կազմելիս եզակի սեռականի վերջում ավելանում է բնորոշիչ ե. Օրինակ՝ Սեռ. բանի, հիման, քաջութեան, գանձու, կայսեր, Բաց. ի բանե, ի հիմանե, ի քաջութեանե, ի գանձուե, ի կայսերե և այլն։

Գործիական հոլովը պատասխանում է Բե, Բե իսիք (ինչով) հարցերին, քաղաքա (քաղաքով), նովա (նրանով), մեծա (մեծով) և այլն։

Գործիական հոլովը գրաբարում

ըն բն-

բո՞ւրի մասնակիչ, ինչպէս հայցականը և բացատրականը

Գործիականի հոլովական բնորոշիչ մասնակիչ նրեր է՝ վ, լ, բ, որոնք ավելանում են բառավերջին եզակի րվում:

Սզակի գործիական հոլովը կազմվում է եզակի սեռակ ածից բառավերջում ընդունելով վ, լ կամ ր: Օրինակ՝

Սևո. գործոյ, բանի, աստեղ և այլն:

Գործ. գործով, բանիւ, աստեղք և այլն:

(գործով), (խոսքով), (աստղով)

Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականից բառավերջում ավելանալով ք հոգնականացուցիչը: Օրինակ՝
Եզակի գործիակ. գործով, բանիւ, տխտանաւ, ծովու և այլն:
Յոգն. գործիակ. գործովք, բանիւք, տխտանաւք, ծովուք և այլն:
(բանյուք), (տխտանօք):

Եթե բառը հոլովման ժամանակ սեռականում ունի ու ղերջավորութունը, գործիականում բնորոշիչ մասնակիչ չի ընդունում: Օրինակ՝

Սևո. խրատու, ծովու, գանձու և այլն:

Գործ. խրատու, ծովու, գանձու և այլն:

Գործիականի վ, լ, բ բնորոշիչների կիրառությունը

ա) վ Բ Ն Ո Ր Ո Շ Ի Չ Ը

Վ. բնորոշիչը կիրառվում է միայն այն ժամանակ, երբ բառը եզակի սեռականում ունի ոյ հոլովական վերջավորութունը: Եթե վ բնորոշիչն ավելանում է, այն ժամանակ չ կիսաձայնը դուրս է ընկնում: Օրինակ՝

Սևո. գործոյ, ծառոյ, գետոյ:

Գործ. գործով, ծառով, գետով:

բ) Ի Բ Ն Ո Ր Ո Շ Ի Չ Ը

Ի բնորոշիչը ավելանում է եզակի սեռականին այն ժամանակ, երբ սեռականում ունի ձայնավոր հոլովական վերջավորութուն: Օրինակ՝

Սևո. բանի, սրտի, տխտանայ, Արամայ և այլն:

Գործ. բանիւ, սրտիւ, տխտանաւ, Արամաւ և այլն:

(բանիվ), (սրտիվ), (տխտանավ), (Արամավ)

Երբ ավելանում է լ բնորոշիչը, այն ժամանակ սեռականի

չ կիսաձայնը չի արտաբերվում և դուրս է ընկնում, ինչպես ոյ ձիացութեան մեջ վ բնորոշիչից հետո:

Երբ սեռականը ունի ու հոլովական վերջավորութունը, այդ դեպքում գործիականում լ բնորոշիչը չի ավելանում, որովհետև ու ձայնավորից հետո գրվող լ-ը չի կարգացվում (ու+լ), այլ մնում է նույն ու-ն: Օրինակ՝

Սևո. խրատու, գանձու, ծովու և այլն:

Գործ. խրատու, գանձու, ծովու և այլն:

Ի հնչյունը հոգնակի գործիականում և ձայնավորից հետո արտաբերվում է յաւ (իւ): Օրինակ՝ բանիւք (բանյուք), սրտիւք (սրտյուք), ձայնիւք (ձայնյուք) և այլն:

Ի հնչյունը հոգնակի գործիականում ա ձայնավորի հետ արտաբերվում է օ: Օրինակ՝ նշանաւք (նշանօք), տխտանաւք (տխտանօք), այդեաւք (այդեօք) և այլն:

գ) Բ Բ Ն Ո Ր Ո Շ Ի Չ Ը

Բ բնորոշիչն ավելանում է եզակի սեռականին այն ժամանակ, երբ բառը սեռականում ունի բաղաձայն վերջավորութուն օ, ր, դ: Այս դեպքում և բաղաձայնը ք հնչյունից առաջ վերածվում է մ հնչյունին: Օրինակ՝

Սևո. հիմաւ, գոյութեամ, դստեր, աստեղ և այլն:

Գործ. հիմամք, գոյութեամք, դստերք, աստեղք և այլն:

Մեծօք. — Հնազույն ժամանակ գործիական հոլովի վերջավորութունը հոգնակիում եղել է աւք, որը 12-րդ դարում դարձավ օք, (աշխարհաւք — աշխարհօք, քաղաքաւք — քաղաքօք և այլն):

Ներգոյական եւլովը հայերեն քերականութեան մեջ մտել է ուշ շրջանում: 5-րդ դարի հայ քերականութեան մեջ այն գոյութուն չուներ որպես առանձին հոլոված, բայց ներգոյականի զաղափարը եղել է մարդկանց գիտակցութեան մեջ և այժմ էլ աշխարհաբարում այն կա թե գիտակցութեան մեջ և թե քերականութեան մեջ որպես առանձին հոլոված:

Գրաբարում ներգոյականը կազմվում է եզակիում՝ սեռականից, տրականից և հայցականից, իսկ հոգնակիում միայն եռյցականից: Օրինակ՝ Ի բանի (խոսքի մեջ), Ի նմա (նրա մեջ), Ի քաղաքս (քաղաքներում) և այլն:

ՊԱՐԶ ԵՎ ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Եթե հոլովման ժամանակ բառը եզակիում և հոգնակիում ունի մի տեսակ հոլովիչ բոլոր հորիզոնում, այդպիսի հոլովումը կոչվում է պարզ Օրինակ՝

Սիրտ, սրտի, սրտիւ, սրտից, սրտիւք (բոլոր հոլովներում պահպանվել է ի ձայնավորը):

Եթե հոլովման ժամանակ բառը եզակիում և հոգնակիում չի ունենում միատեսակ հոլովիչ բոլոր հոլովներում, այդպիսի հոլովումը կոչվում է խառն կամ քույլ հոլովում: Օրինակ՝

Եզակի	Թաղանթի
Ուղղ. աշխարհ	աշխարհք
Սեռ. աշխարհի	աշխարհաց
Գործ. աշխարհաւ	աշխարհաւք(օք)

Այս օրինակի մեջ եզակի սեռականը վերջանում է ի ձայնավորով. չեզույն սկսվում է գործիականից, որովհետև փոխանակ ըստ հոլովական կազմության կանոնի լինելու աշխարհիւ, դառնում է աշխարհաւ, և զրա համապատասխան հոգնակի սեռականում ստանում է այդ վերջավորությունը (փոխանակ ից վերջավորության):

Դ ա ո Ձ

ՁԱՅՆԱՎՈՐ ՀՈԼՈՎՈՒՄ

Ա Հ ո լ ո Վ ու մ

ՈՒԺԵՂ (ՊԱՐԶ)

Եզակի թիվ

Ուղղ. տիտան	(տիտան)	տիտանք	(տիտաններ)
Ս. տիտանայ	(տիտանի)	տիտանաց	(տիտանների)
Տ. տիտանայ	(տիտանին)	տիտանաց	(տիտաններին)
Հ. զտիտան	(տիտանին)	զտիտանս	(տիտաններին)
Բ. ի տիտանայ	(տիտանից)	ի տիտանաց	(տիտաններից)
Գ. տիտանաւ	(տիտանով)	տիտանաւք(օք)	(տիտաններով)
Ն. ի տիտան	(տիտանի մեջ)	ի տիտանս	(տիտանների մեջ)

Ա ՀՈԼՈՎՈՒՄՈՎ ՀՈԼՈՎՈՒՄ ԵՆ

ա) Բառը հասուկ ամուսններ, սակավ բացառությամբ: Օրինակ՝ Հայկ, Արամ, Այրարատ, Արշակ, Տիգրան, Վարդան, Մեսրոպ, Թադևոս, Սուրեն, Գուրգեն, Մարտ և այլն:

բ) Մի բարձր ամեղակոն բառեր՝ ծփանք, զբոսանք, աչք (աչաց), խելք (—խելաց), ձեռք (—ձեռաց), միտք (—մտաց), փառք (—փառաց), Ալանք (—Ալանաց), Գուգարք, Մասիք, Մարք, Մոկք (—Մոկաց), Միջագետք, Վիրք, Գամիրք, Տաշիրք, Մոփք (—Մոփաց), կենանք (—կենանց), զօրք (—զօրաց), Խրախանք (—խրախանաց) և այլն:

Ծանոթ. — Փակագծերում առնվածը հոգնակի սեռական է:

Ուղղ. Վիրք	Գուգարք	միտք
Ս. Վրաց	Գուգարաց	մտաց
Տ. Վրաց	Գուգարաց	մտաց
Հ. (զ)Վիրս	(զ)Գուգարս	զմիտս
Բ. ի Վրաց	ի Գուգարաց	ի մտաց

Գ. Վրաւք(օք) Գուգարաւք(օք) մտաւք(օք)

Ն. Ի Վիրս Ի Գուգարս Ի միտս

գ) Ա կամ իմ վերջավորությունն ունեցող բառերը. այս բառերի հոլովման ժամանակ սեռականում և նրանից կազմված հոլովներում ավելանում է միայն յ: Օրինակ՝

Ուղղ.	Աննա	Եղեսիա	Կիլիկիա
Ս.	Աննայ	Եղեսիայ	Կիլիկիայ
Տ.	Աննայ	Եղեսիայ	Կիլիկիայ
Հ.	զԱննա	զԵղեսիա	զԿիլիկիա
Բ.	յԱննայ	յԵղեսիայ	ի Կիլիկիայ
Գ.	Աննաւ	Եղեսիաւ	Կիլիկիաւ
Ն.	յԱննա	յԵղեսիա	ի Կիլիկիա

Այսպէս հոլովվում են՝

Սիկիլիա, Արարիա, Եթովպիա, Իտալիա, Ասիա, Ալեքսանդրիա, Սերաստիա և այլն:

գ) Հունական առ, օս, իօս, ես և հայկական ուեի վերջավորությունն ունեցող բառերը՝ Անգրէաս, Պիթագորաս, Հոմերոս, Կիւրոս, Տիբերիոս, Սոկրատէս, Աքիլլէս, Արէս, Փիլիպպոս, Արքեդայոս, Կաղմոս, Պրոմէթէոս, վկայունի, Տիգրանունի և այլն: Հունական այս բառերի հոլովման ժամանակ առ, օս վերջավորությունները զուրս են ընկնում, իսկ իօս, եօս և ես վերջավորությունների փ և ք ձայնավորները միանալով ա հոլովիչի հետ դառնում են եայ: Օրինակ՝

Ուղղ.	Հոմերոս	Աքիլլէս	Տիբերիոս	Մասիք
Ս.	Հոմերայ	Աքիլլեայ	Տիբերեայ	Մասեայ
Տ.	Հոմերայ	Աքիլլեայ	Տիբերեայ	Մասեայ
Հ.	զՀոմերոս	զԱքիլլէս	զՏիբերիոս	զՄասիք
Բ.	ի Հոմերայ	յԱքիլլեայ	ի Տիբերեայ	ի Մասեայ
Գ.	Հոմերաւ	Աքիլլեաւ	Տիբերեաւ	Մասեաւք(օք)
Ն.	ի Հոմերոս	յԱքիլլէս	ի Տիբերիոս	ի Մասիք

Ուղղ.	վկայունի	վկայունիք
Ս.	վկայունեայ	վկայունեայ
Տ.	վկայունեայ	վկայունեայ
Հ.	զվկայունի	զվկայունիք
Բ.	ի վկայունեայ	ի վկայունեայ
Գ.	վկայունեաւ	վկայունեաւք(օք)
Ն.	ի վկայունի	ի վկայունիք

ե) Է վերջավորությունն ունեցող հասուկ անուններ. այս բառերի հոլովման ժամանակ բառավերջի և ձայնավորը միանալով ա հոլովիչի հետ դառնում է եայ: Օրինակ՝ Ուղղ. Մանէ, սեռ. Մանէ + աչ = Մանեայ, բայց. Ի Մանեայ, գործ. Մանեաւ, Ն. Ի Մանէ:

Կան հասուկ անուններ, որոնք չեն հոլովվում ա հոլովումով:

Ս. հոլովման գործիականի վերջավորությամբ են կազմված մի շարք մակբայներ՝ հարկաւ, բնաւ, սնիպաւ և այլն:

«Մասիք» բառի նման են հոլովվում Միջերկրեայք, հարսանիք, Հայաստանեայք (սեռ. Հայաստանեայց, գործ. Հայաստանեաւք(օք)), հայց. զՀայաստանեայս, ներ. Ի Հայաստանեայս) քորհնէք (սեռ. քորհնեայց) և այլն անհոսկան բառերը:

Այս հոլովումը քերականության մեջ կոչվում է նաև ես հոլովում:

ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա հոլովումով հոլովվում են ցուցական գերանունները՝ նա առ, դա:

Եզակի քի

Ուղղ.	Նա	դա (զա)
Ս.	նորա (նրա)	դորա (դրա)
Տ.	նմա (նրան)	դմա (դրան)
Հ.	զնա (նրան)	զդա (դրան)
Բ.	ի նմանէ (նրանից)	ի դմանէ (դրանից)
Գ.	նովաւ (նրանով)	դովաւ (դրանով)
Ն.	ի նմա (նրանում)	ի դմա (դրանում)

Յոգնակի քի

Ուղղ.	նոքա (նրանք)	դոքա (դրանք)
Ս.	նոցա (նրանց)	դոցա (դրանց)
Տ.	նոցա (նրանց)	դոցա (դրանց)
Հ.	զնոսա (նրանց)	զդոսա (դրանց)
Բ.	ի նոցանէ (նրանցից)	ի դոցանէ (դրանցից)
Գ.	նոքաւք(օք) (նրանցով)	դոքաւք(օք) (դրանցով)
Ն.	ի նոսա (նրանցում)	ի դոսա (դրանցում)

Նույն եղանակով հոլովվում է նաև նա գերանունը: Գա. սա, նա գերանունների հիմքը հոլովման ժամանակ:

հանդիսանում է զո, սօ, նո, որոնցից կազմվում են եզակի սեռականը և զործիականը և հոգնակիի բոլոր հոլովները: Ա ձայնավորը կրկնվում է բոլոր հոլովներում:

Դե, սա և նա գերանունների հոլովման ժամանակ եզակի թվում հիմքի (դո, նո, սո) վրա ավելանում է ր (դո-ր-ա, նո-ր-ա, սո-ր-ա), իսկ տրականում—մ (դո-մա, նո-մա և այլն), իսկ հոգնակիում—ց. այսպես դո-ց-ա, նո-ց-ա, սո-ց-ա և այլն:

Այդ գերանունների սկզբնատառերը (ս, դ, ն) արտահայտում են պատկանելության, ինչպես և անձնական և ցուցական գերանունների իմաստ:

Դե, սա, նա գերանունների հոլովման եզակի զործիականը կազմված է զործիականի կրկնակի վերջավորութունով (վ և լ). դո-վ-աւ, սո-վ-աւ և այլն, իսկ հոգնակի զործիականը՝ կրկնակի հոգնակի վերջավորութունով (ք). դո-ք-աւ-ք(օք) և այլն:

Թարգմանել աբխազերաբար

Թուղթ Ածղահակայ և յօժարութիւն Տիգրանայ: Յուդարկունն Տիգրանայ ի Մարս: Թանձն առնու Տիգրան և տայ զքոյր իւր Տիգրանուհի Ածղահակայ: Ոչ զիտես, ասէ, եթէ եղբայր քո Տիգրան խանդայ զտիկնութիւն քո: Նա անցանէ, զնայ ի Մարս և շինէ անդ զՄարակերտ: Սա տիրէ ամա երեսուն և մի. թողու զթաղաւորութիւնն Անտիոքայ: Արշակ է որդի Վաղարշակայ: Գտանէ յԱսիա պղնձաձոյլ պատկերս Արտեմիդեայ և Հեքակկայ: Անկունն Տիրեբեայ: Դաշտք Ամասիայ: Իշխանութիւն սորա: Տայ նմա իշխանութիւն: Կղզիք Ասիայ: Դուստր Արամայ: Միարանութիւն աղգաց: Զօրութիւն քաջաց: Բազմութիւն զօրաց: Տեսողութիւն աշաց: Մեծութիւն փառաց: Գատմութիւն Ալանաց: Աշխարհն Դուգարաց:

Թուղթ—նամակ

Անդ—այնտեղ

Յօժարութիւն—համաձայ-

Ամս երեսուն և մի—երե-

նութիւն, ուղելը

սուն և մի տարի

Յուդարկունն—ուդարկելը

Ի Մարս—Մարաստան, Մա-

նանգայ—նախանձում է,

բերի երկիրը

խանդում է

Դ ա ս է

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Սահմանական եղանակի՝ անցյալ անկատարը կազմելու համար ել(իլ), ալ, ուլ էական բայերի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի վրա ավելանում է անցյալ անկատարի վերջավորութիւնը՝

Եզակի	Յոգնակի
I դեմքում—ի	աք
II դեմքում—իր	էք
III դեմքում—ր	ին

Օ ր ի ն Ա Կ

Ել(իլ)	Ալ	Ուլ
է—ի	է-աք ալ-ի ալ-աք	ու-ի ու-աք
է-իր	է-իրք ալ-իր ալ-իրք	ու-իր ու-իրք
է-ր	է-ինք ալ-ր ալ-ինք	ոլ-ր ու-ինք

Ե(ի)

Ա

Ե զ ա կ ի ր ի լ

աղատէ-ի (աղատում էի)	կարգայ-ի (կարդում էի)
աղատէ-իր (աղատում էիր)	կարգայ-իր (կարդում էիր)
աղատէ-ր (աղատում էր)	կարգայ-ր (կարդում էր)

Որ

թողու-ի (թողնում էի)
թողու-իր (թողնում էիր)
թողոյ-ր (թողնում էր)

Յ ո զ ն ա կ ի ր ի լ

աղատէ-աք (աղատում էինք)	կարգայ-աք (կարդում էինք)
աղատէ-իրք (աղատում էիք)	կարգայ-իրք (կարդում էիք)
աղատէ-ինք (աղատում էին)	կարգայ-ինք (կարդում էին)

ՈՒ

Թողու-աք (թողնում էինք)

Թողու-իք (թողնում էիք)

Թողու-ին (թողնում էին)

Ծանոթ.—ա) էի, էիր, էր և այլն ձևերի փոխարեն հին գրաբարում եղել է հի, հիր, հր, հաք, հիք, հին:

բ) Ել էական բայն անցյալ անկատարում չունի առանձին ձև, այլ նույն էլ էական բայի ձևն է: Ել էական բայն արտահայտում է ներգործական բայի իմաստ, իսկ իլ էական բայը մեծ մասամբ—կրավորական:

գ) Ա և ու խոնարհման բայերը կարող են լինել ներգործական, կրավորական և չեղար սեռի:

Կարգավ ել քաղցմանի

Համբառնայր զաչս իւր: Գայր հասանէր յերկիրն Այրաբատայ, ի տունն, որ էր հայրենի: Կողմոս փախստական զնայր ի Հայս, առ հայր իւր, և ասէր. զայ Բէլ արքայ ի վերայ քո և էս անուասիկ կամ փախստական: Եւ Հայկն Արեթայն մերձեայր և ունէր ի ձեռին զաղեզն, որպէս հեծան հօր մայրափայտեայ: Եւ զօրք նորա փախստական լինէին (Մ. Խորենացի): Գրէր նա և հանապազօրդ ցուցանէր: Եւ զնոյն զիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի Թաղաւորանիստ քաղաքն (Եղիշէ): Այն էին և կամք Յունաց, լսել զայն ախորժուքեամբ: Երզնայր և հաստատէր: Սոյնպէս առնէր և ընդ ամենայն չղոմանս ամբականաց, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանն և ի Վերու Ոչ եթէ չկարեմ ածնել բարի ինչ, այլ չկամիմ: Եթէ որպէս վկայենն՝ մի է պատճառ և նոյն էական և մշտնջենաւոր, յայտ է, թէ այլքն ոչ էականք են և ոչ մշտնջենաւորք և դիւրող էականքն և մշտնջենաւորք ընդ էականսն և ընդ մշտնջենականսն երկրպագութիւն առնուն (Եղիշէ): Գովէին զարութիւն և զքաջութիւն զօրաց:

Համբառնայր—բարձրացնում էր:
Առ հայր իւր—իր հոր մօտ
Ի վերայ քո—քո վրա
Անուասիկ—անա

Կամ փախստական—փախստական եմ

Կամ—Յնում եմ
Մերձենալ—մոտենալ
Ունէր ի ձեռին—ձեռքին ունիւր
Ունել—ունենալ

Ամբականաց—ամուր(սեռ.հոլ)
Ընդ—հետ

Ոչ եթէ—ոչ թե

Չկարեմ—չեմ կարողանում

Առնել—առնել, ստեղծել

Չկամիմ—չեմ կամենում

Չէական—ոչ էական, ոչ ինքնագո

Չմշտնջենաւոր—ոչ մշտնջենա-

Հեծան—գերան

Մայրափայտեայ—մայրի՝ փայտից

Հանապազօրդ—ամեն օր, շարունակ

Ցուցանել—ցույց տալ

Տայր տանել—տանել տալ

Երզնուլ—երզվել

Սոյնպէս առնէր—այսպէս էր առնում

Ընդ ամենայն կողմանս—բոլոր երկրների հետ

Ընդ էականսն և ընդ մշտնջենականսն—էականների և մշտնջենականների հետ

Էական—ինքնագո, անեղ, անստեղծ

Զիւրդ—խնայեա (ինչո՞ւ)

Երկրպագութիւն առնուլ—երկրպագութիւն

Կրպագութիւն տալ, երկրպագել

ԵՐԳ ԴԱՇՏԱՅ

Զինչ քաղցր մեզ շինականաց,

Բայց նուազել զերդս զաշտաց,

Զարօտ լերանց, զաղբիւր վճիտ,

Զհովանիս անտառախիտ:

Երգ զաշտաց—զաշտերի երգը

Բայց—եթե ոչ

Զինչ—որն է (նշանակում է նաև ինչ)

Զարօտ լերանց—լեռների արտաք

Զաղբիւր վճիտ—հստակ աղբ

Շինականաց—գյուղացիների

յուրք

Զինչ քաղցր մեզ շինականաց

Զհովանիս—սովերները

—որն է քաղցր մեզ գյուղացիներիս համար

Անտառախիտ—խիտ անտառով ծածկված

Հատկացուցիչ եվ հատկացյալ

Հատկացուցիչը թե զբարարում և թե աշխարհաբարում միշտ զրվում է սեռական հոլովով: Օրինակ՝ երգ դաշտաց, որդի նորա, զաւառք Աղիւ վստայ, զօրութիւն մեր: Դաշտաց, նորա Աղիւ վստայ, մեր բառերը հատկացուցիչ են և զրված են սեռական հոլովով: Երգ, որդի, զաւառք, զօրութիւն բառերը հատկացյալ են, որովհետև վերաբերում են հատկացուցչին:

Աշխարհաբարում հատկացուցիչը զրվում է միւս տառադաս: Օրինակ՝ մեր հերոսները, մեր բանակը, քաղաքի հազարաթիւնը, սոցիալիզմի պաշտպանները (ընդգծված բառերը հատկացուցիչ են):

Դրաբարում հատկացուցիչը սովորաբար զրվում է նեօադաու: Օրինակ՝ փառք մեր, աչօք իւրեանց, զօրութիւն քաջութիւն զօրաց և այլն:

Դրաբարում հատկացուցիչը կտրող է զրվել նաև առաջադաս:

Հատկացուցիչ կտրող է լինել գոյականը, ածականը, գերանունը, գերբայը, թվականը:

Հատկացուցիչը պատասխանում է որոշ հարցին: Օրինակ՝ ահն դիտողի (գիտողի աչքը): Ահն որոշ—ահն դիտողի:

Նախադաս եվ հետադաս ածականներ

Դրաբարում, ինչպես և աշխարհաբարում, ածականները գործածվում են գոյականների հետ և գոյականներից անջատ: Առանձին գործածվելով ածականներն ստանում են գոյականի իմաստ:

Աշխարհաբարում ածականը միշտ զրվում է նախադաս (առաջադաս): Օրինակ՝ իմաստուն առաջնորդ, քաջ զորավար և այլն:

Դրաբարում ածականը զրվում է թե առաջադաս և թե հետադաս: Օրինակ՝ իմաստուն առաջնորդ, քաջ զորավար կամ առաջնորդ իմաստուն, զորավար քաջ:

Եթե ածականները առաջադաս են, մնում են անփոփոխ, այնպիսին թվով և հոլովով չեն համաձայնում գոյականի հետ, իսկ եթե հետադաս են, սովորաբար համաձայնում են:

ա) Առաջադաս ածական—մարմնաւոր մեծութեան, չարաչար մտեւամբ և այլն: Այս օրինակների մեջ «մարմնաւոր» և «չարաչար» բառերն ածականներ են և զրգած ուղղական հոլովով, իսկ «մեծութեան» և «մտեւամբ»—գոյականներ, որոնցից առաջինը զրգած է սեռական, իսկ երկրորդը՝ գործիական հոլովով:

բ) Հետադաս ածական—ծողովուրդ բազում, դաշտը անծայրածիր: Բանիք պղաճալիս (բանյութ սպառնալից):

Առաջին օրինակի մեջ եզակի ուղղական, երկրորդ օրինակի մեջ հոգնակի ուղղական, երրորդ օրինակի մեջ հոգնակի գործիական: Բոլոր դեպքերում գոյականը և ածականը թվով և հոլովով համաձայն են:

Մասնւր.—Միավանկ ածականները զրվելով նախադաս կտրող են համաձայնել թվով և հոլովով: Օրինակ՝ մեծի

առն կամ մեծ տանն (սեռ. հոլ.), զօրօք քաջօք կամ քաջ զօրօք (հոգ. գործ.) և այլն:

Ն ա խ դ ի ռ ն ե ռ

Նախդիր բառը հունական բառ է, որ V դարում Դավիթ փիլիսոփան բառացի թարգմանել է նախադասություն, նախադարձություն բառի փոխարեն այժմ գործածական է նախդիր բառը:

Նախդիրները բառամասնիկներ են, որոնք զրվում են բառերի վրա և բառերն ստանում են նոր իմաստ և զրահորում իրենց հարաբերությունը ստորոգյալի հետ:

Այդ հարաբերությունը կտրող է արտահայտվել որպես նըպատակ, տեղ, պատճառ, ժամանակ և այլն: Օրինակ՝ երթամ ի քաղաքն (զնում եմ քաղաք)—տեղ:

Ընդ վախճանել շնչոյն (չունչը փչելու ժամանակ)—ժամանակ:

Առ այրել (այրելու համար)—նպատակ:

Առ յիմարութեան (հիմարությունից)—պատճառ:

Դրաբարում նախդիրները երկու տեսակ են՝ պարզ և բարդ: Պարզ նախդիրներն են՝ ի(յ), ց, դ, առ, ընդ, ըստ:

Բարդ նախդիրները նրանք են, որոնք կազմված են պարզ նախդիրների և որևէ խոսքի մասի միացությունից: Դրանք են՝

Ընդդեմ—ընդ + դեմ	զօրէն—զ + օրէն
յարտաքս—յ + արտաքս	զառաջեալ—զ + առաջեալ
զհետ—զ + հետ	յառաջ—յ + առաջ
զկնի—զ + կնի	ի ձեռն—ի + ձեռն

Առ, ընդ, ըստ, ի նախդիրները զրվում են առանձին, իսկ դ, յ, ց նախդիրները—բառի հետ միասին: Օրինակ՝ առ նա, ընդ սմին, ըստ հրամանի, ի տիտանայ, զնա, յՄրամայ, ցնա և այլն:

Պատահում է, որ հայցական և բացառական հոլովները երբեմն ընդունում են առ, ընդ, ըստ նախդիրները, այսպիսի դեպքերում այդ հոլովների զ, ի կամ յ նախդիրները չեն զրվում: Օրինակ՝

զհայր—առ հայր	յաջմէ—ընդ աջմէ
զքեզ—ընդ քեզ	ի միռջէ—մի ըստ միռջէ և այլն:

Նախդիրները հին հայերենում միացել են շատ բառերի

հետ և նրանց հետ զործածվելով դարձել մի բառ։ Այժմ այդ բառերից շատերը զործածվում են մեր լեզվի մեջ և չի կարելի նախդիրները բաժանել արմատից, որովհետև բառը կկորցնի իր իմաստը։ Այսպես՝

Առանձին—առ + անձին	Ցտեսութիւն—ց + տեսութիւն
Ընկեր—ընդ + կեր	Ցպահանջ—ց + պահանջ
Ընտանիք—ընդ + տանիք	Ցերեկ—ց + երեկ
Ընդունիլ—ընդ + ունիլ	Ցաւելեալ—ց + աւելեալ
Չափվայր—չ + առ + ի + վայր	յոյժ—յ + ոյժ
Չարթնուլ—չ + արթնուլ	

Նախադրույթում և՛ հետադրույթում

Նախդիրների մեջ կան այնպիսիները, որոնք իսկական նախդիրներ չեն։ Նրանք բաժանվում են երկու խմբի. ա) նախդիրներ, որոնք զրվում են բառից առաջ և բ) նախդիրներ, որոնք զրվում են բառից հետո։ Առաջին խումբը կոչվում է նախադրույթում, երկրորդը՝ հետադրույթում։

Նախադրույթումներ՝ աղաղաւ (համար), վասն (համար), առաջ առաջի, արտաքոյ, արտաքս, դէմ, զունակ, դէպ, հետ, հուպ, հանդերձ (միմի), թանց և թարց (առանց), ներքոյ, նման, պէս, սակա (համար), մերձ, յաղագս (մասին), նման, շուրջ, շուրջանակի, փոխան, փոխանակ և այլն։

Հետադրույթումներ—նույն նախադրություններն են զործածված հետագայում։

Ի Ե՛վ ընդ նախդիրներ հայցականով

Մի շարք նախդիրներ զրվելով անունների վրա կազմում են հոլովներ, իսկ մյուսներն իրենք առնում են զանազան հոլովներ։ Առաջին կարգի նախդիրները կոչվում են հոլովակերտ, երկրորդը—հոլովառու։

Հոլովակերտ նախդիրներն են՝ դ, ի(յ), ց, Օրինակ՝ զնա, ի տխուհայ, յԱրշակայ, ցնա, ի բանի, ի ամա և այլն։

Հոլովառու նախդիրները զանազան հոլովներ են առնում որպես խնդիր։ Օրինակ՝ վասն սնոյ (սեռ.)—սիրտ համար, ի միջի մերում (տե.)—մեր մեջ, փոխանակ այստե (սեռ.)—սրա փոխարեն, յաղագս պատերազմին (սեռ.)—պատերազմի մասին և այլն։

Ի(յ) Ե՛վ ընդ նախդիրներ հայցականով

1. Ի(Յ) ՆԱԽԴԻՐ

Ի(յ) նախդիրը եզակի հայցականի վրա զրվելով ցույց է տալիս՝

ա) ուղղություն, շարժում, այն տեղը, դեպի ուր ուղղված է զործողությունը։ Օրինակ՝ երթամ ի Տուն (զնում եմ տուն), հասանէր յերկիրն Արարատայ (հասնում էր Արարատի երկիրը), ի Վաղարշապատ, ի Հայս և այլն։

բ) զործիակցման իմաստ։ Օրինակ՝ ի ձեռն նախարարացն—(նախարարների միջոցով, ձեռքով), յանուն (հանուն) նորա—(նրա անունով) և այլն։

Հոգնակի հայցականի վրա զրվելով ցույց է տալիս մեզ, Օրինակ, ի քաղաքս (քաղաքներում), ի դաշտս (դաշտերում), ի Հայս (Հայաստանում), ի Վիրս (Վրաստանում), ի Գուգարս (Գուգարքում) և այլն։

2. Ընդ նախդիր

Եզակի և հոգնակի հայցականի հետ ցույց է տալիս ուղղություն, դեպի մի կողմ։ Օրինակ՝ զնայր ընդ հիւսիս—զնում էր դեպի հյուսիս, ընդ չորս կողմանս երկրի—դեպի երկրի չորս կողմերը։

Դ ա ս Ը

Ե Ր Ա Ջ

Տեսանէի ծառ մի ի մէջ երկրի, և բարձրութիւնն նորա մինչև յերկինս, և լայնութիւնն նորա ի ծագս ամենայն երկրի, տերն նորա գեղեցիկ և պտուղ նորա բազում. ի ներքոյ նորա բնակէին զազանք վայրենիք և յոստս նորա հանգչէին թռչունք բազումք: Տեսանէի և ահա այլ մի, որ ասէր:

Ի մէջ երկրի—երկրի մեջ բազում—շատ
բարձրութիւնն նորա—նրա բարձ ի ներքո—տակ
բությունը ի ներքո նորա—նրա տակ
նորա—նրա յոստս նորա—նրա ճյուղեր
Ի ծագս ամենայն երկրի—ամբողջ
բողջ երկի ծայրերը այլ մի—մի մարդ
ծագս—ծայրերը, կողմերը այլ—մարդ (տղամարդ)
ամենայն—բոլոր

Ա ՀՈՒԹՎՈՒՄ

(Չայնավոր)

Ի—Ա

Այս հոլովումը կոչվում է քնյի (կամ խառն):

Այս հոլովման հատկանիշն այն է, որ սեռականում անձայնավորը չկիսաձայնի ազդեցութեամբ դառնում է ի, ախնքն փոխանակ լինելու «աշակերտայ», ստացվում է «աշակերտի», իսկ բացառականի մեջ բառավերջում ստանում է նյ, որը արտաբերվում է ե (յաշակերտնյ—յաշակերտե): Սեռականում ի անձայնավորից հետո չկիսաձայնը չի հնչվում—ոչ թե անփոփոխ չի աշակերտի:

Ի—ա (խառն կամ թույլ) հոլովման օրինակ՝

Եզակի թիւ

- Ուղղ. աշակերտ (աշակերտ)
- Ս. աշակերտի (աշակերտի)
- Տ. աշակերտի (աշակերտի)
- Հ. զաշակերտ (աշակերտին)

- Բ. յաշակերտէ (աշակերտից)
- Գ. աշակերտաւ (աշակերտով)
- Ն. յաշակերտի (աշակերտի մեջ)

Յոգմեկի թիւ

- Ուղղ. աշակերտք (աշակերտներ)
- Ս. աշակերտաց (աշակերտների)
- Տ. աշակերտաց (աշակերտների)
- Հ. զաշակերտս (աշակերտներին)
- Բ. յաշակերտաց (աշակերտներից)
- Գ. աշակերտաւք (օք) (աշակերտներով)
- Ն. յաշակերտս (աշակերտների մեջ)

Այսպիսի հոլովում են՝

ա) ապաւեն, զաւազան, զունդ, դրօշակ, ճամբար, պահապան, քարտէզ, քնար, քուրմ, տաճար, թարգման, մեհեան (մեհնի) և այլն:

բ) մի շարք անականներ՝ ազահ, վայրազ, հօօր, յիմար, ձգ (ձիգի), ժիւր (ժրի), համօրէն (համօրինի) և այլն:

գ) այն բառերը, որոնք վերջանում են՝

եակ—անեակ (անեկի՞ անեկաւ), հնդեակ, վեցեակ, սենեակ, մանեակ, աղաւնեակ, որդեակ և այլն:

Ծանօթ.—սեռականում եւ երկնայունը դառնում է ե. Թրինակ՝ սենեակ, սենեկի, սենեկաւ, սենեակք, սենեկաց, սենեկօք և այլն):

եկ—միակ, ազարակ, խաժակ, սուղակ, վիճակ, սրուակ, տղնակ, սուրհանդակ:

ուօր—թագաւոր, ալեօր, թեաւօր, փառաւոր:

ուկ—վհուկ, վհիկ, վհկաւ, վհկաց, վհկաւք (օք):

արդ—անցորդ, նաւորդ, ձախորդ, ճանապարհորդ:

եկամ—լեռնական, հաւանական, թափառական, բանական ուղան և այլն:

եհ, եհ—հրաւեր, նուէր, թիկնաւէտ, հոտաւէտ, շահաւէտ և այլն:

իշ—հալածիշ, մատնիշ, փրկիշ, նեղիշ (հոլովման ժամանակ ի ցայնավորը դուրս է բնկնում, նեղիշ, նեղչի, նեղչաց, նեղչաւք (օք):

եղ—զօրեղ, ձայնեղ, թիկնեղ, ահեղ և այլն:

ացու, ու—ապահանացու, մահկանացու, վաշխառու, քսու
լեզու և այլն.

բռն—նուազարան, ճեմարան, վառարան, վարժարան.

ստան—բուրաստան, Ասորեստան, Վրաստան, Հայաստան,
Ռուսաստան և այլն.

տնի—ազաշանք, պաղատանք, կապանք, սլարժանք, յոր-
ձանք, ծփանք և այլն.

ոց—զպրոց, փողոց, սղոց, խայթոց, սլարանոց, հյուրանոց
և այլն.

ուշ—տեսուշ, վաշխուշ և այլն (տեսուշ, տեսչի, տեսչաւ,
տեսչաց, տեսչօք).

իք—կնճիթ, (կնճիթի, աւ. աց. օք), Դաւիթ, խրճիթ և այլն.
իկ—կօշիկ (կօշիկի, կշիկաւ, աց. օք), կապիկ, շապիկ, մըր-
րիկ, փոթորիկ և այլն.

եմ—պարէն, ժապուէն, աղաւէն, հեղէն և այլն.

աղ—տեսանող, կարող, յաղթող, կամեցող և այլն.

Հեհլալ բաւերով բարդված բառեր.

վաթ—զօրավար, նաւավար, զեկավար և այլն.

ապամ—հայրասպան, մայրասպան, որդեւզան և այլն.

պոպիկ—եռապատիկ (եռապատիկի, եռապատիկաւ, եռապատ-
կաց, եռապատիօք), քառապատիկ և այլն.

գիր—ձեռագիր, (ձեռագրի, ձեռագրաւ, աց. աւք(օք), աշ-
խարհագիր, տապանագիր և այլն.

բեր—մահերեր, բօթերեր, շնորհաբեր, պաղարեր, բարե-
բեր և այլն.

մալ—գինեմալ, շահամալ, փառամալ և այլն.

կիր—բնանակիր, վշտակիր, տաժանակիր և այլն.

կալ—տեղակալ, գահակալ, կողմնակալ և այլն.

ե) մի շարք ամենպակաս բառեր՝ երկիր, խաւար (երկրի,
երկրաւ, երկրաց, երկրաւք(օք) և այլն.

զ) մի օտր ամենպակաս բառեր՝ աշք (աշաց, աշաւք(օք),
արհաւիրք (արհաւիրաց, օք), գէպք (գիպաց, գիպօք), ծփանք
յորձանք, միտք (մտաց, մտաւք(օք), խելք, կհանք (կենաց,
կենօք), յացանք, արտասուք և այլն.

է) քվակամներք—հազար, երկու հազար, երեք հազար,
չորեք հազար, հինգ հազար, վեց հազար, եօթն հազար, ութ հա-
զար, ինն հազար, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն
—բոլոր դասական թվականները, բացի առաջին բառից.

Ուղղ.	հազար	երկրորդ	հազարք	երկրորդք
Ս.	հազարի	երկրորդի	հազարաց	երկրորդաց
Տ.	հազարի	երկրորդի	հազարաց	երկրորդաց
Հ.	զհազար	զերկրորդ	զհազարս	զերկրորդս
Բ.	ի հազարէ	յերկրորդէ	ի հազարաց	յերկրորդաց
Փ.	հազարաւ	երկրորդաւ	հազարաւք(օք)	երկրորդաւք(օք)
Ն.	ի հազարի	յերկրորդի	ի հազարս	յերկրորդս

Հազարից սկսած հաշվում են ախպես՝ հազար և մի, հազար
երկու կամ հազար և երկու, հազար և երեք, հազար և չորեք և
այլն.

Կան ղեպքեր, երբ բարդութեան առաջին մասը գրվում է
հետագայ, իսկ վերջին մասը—առաջագոյն. օրինակ հազարք ե-
րեք, հազարք չորեք, հազարք հինգ, հազարք տասն (երեք հա-
զար, չորս հազար և այլն). Այս ղեպքում հոլովման ժամանակ
հազար բառը նույնպէս հոլովվում է.

Ուղղ.	հազար տասն	հազարք տասունք (տաս հազարներ)
Ս.	հազար տասին	հազարաց տասանց
Տ.	հազար տասին	հազարաց տասանց
Հ.	զհազար տասն	զհազարս տասունս
Բ.	ի հազարէ տասնէ	ի հազարաց տասանց
Փ.	հազարաւ տասամբ	հազարաւք տասամբք
Ն.	ի հազարի տասին	ի հազարս տասունս

«ԱՅՐ» ԲԱՌԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

«Այր» բառը հիմնականում ամ հոլովման է պատկանում,
սակայն ունի տարբերութեաններ.

Սկզբի բիւ	Հօգնակի բիւ
Ուղղ. այր (տղամարդ)	արք (տղամարդիկ)
Ս. առն (տղամարդու)	արանց (տղամարդկանց)
Տ. առն (տղամարդուն)	արանց (տղամարդկանց)
Հ. դայր (տղամարդուն)	դարս (տղամարդկանց)
Բ. յառնէ (տղամարդուց)	յարանց (տղամարդկանցից)
Փ. ալամբ (տղամարդով)	արամբք (տղամարդկանցով)
Ն. յառն (տղամարդի մեջ)	յարս (տղամարդկանց մեջ)
այր բառի նման են հոլովվում քեռայր, սկեռայր բառերը.	
այր բառից են կազմված մայր, հայր, եղբայր և տէր բա- ռերը, ախպես՝ մայր, հայր, եղբայր, տիւայր.	

Արք երկու էին ի քաղաքի միում, մինն մեծատունն և միան աղքատ: Եւ մեծատանն էին հօտք և անդեայք ըստ յոյժ: Եւ աղքատին և ոչինչ, բայց որով մի փոքր, և որովն հաստատյալ էր ընդ որդիս նորա ի միասին: Ի հացն նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր և ի ծոց նորա ննջէր. և էր նորա իրբն զգուստր: Եւ եկն անցաւոր առ այրն մեծատունն և խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդէոց իւրոց. և էա զորով աղքատին և արար առնն հկելոյ կերակուր:

Որով—զառ, էգ զառ ի հացն—հացից
Աղքատին—աղքատի ուտէր—ուտում էր
էին—կային ի բաժակէ նորա—նրա բաժա-
կից

Մեծատուն—հարուստ ըմպէր—խմում էր
Թոյժ—շատ ի ծոց նորա—նրա զրկում
զուստր—աղջիկ

Անդեայք—նախիրներ էր նորա իրբն զգուստր—հա-
ստատեալ էր—սովորել, ըն- մարմում էր նրա աղջիկը
տեխացել էր ի հօտից իւրոց—իր հօտերից
Սնդ որդիս նորա—նրա որդիներ յանդէոց իւրոց—իր նախիր-
րի հետ ներից

էառ—առավ, վերցրեց արար կերակուր—կերակուր
Առնն հկելոյ—եկած մարդու պատրաստեց
համար

Սյ և զսյ էական բայերի երրորդ գեմքը զբովնով սեռական հոլովի հետ նշանակում է ունեցալ, Օրինակ՝ և իմ եղբայր—ես եղբայր ունեմ, սչ և օրեմ զիւցազաւց—զյուցազուները սովորութիւնն չունեն, ազուխսուց արջ գոմ—ազվեսները որջեր ունեն և այլն:

Հոլովել աղքատ, քաղաք, աշխարհ, անցաւոր բաները, որոնք իւր խառն հոլովման են պատկանում:

Դ ա ս Ը

ՊԱՐԶ Ո ՀՈՒՈՎՈՒՄ

(Ուժեղ)

Եզակի թիւ

Յոգնակի թիւ

Ուղղ.	գործ (գործ)	գործք (գործեր)
Ս.	գործ-ոյ (գործի)	գործ-ոց (գործերի)
Տ.	գործ-ոյ (գործ)	գործ-ոց (գործերի)
Հ.	զգործ (գործ)	զգործ-ս (գործերը)
Բ.	ի գործ-ոյ (գործից)	ի գործ-ոց (գործերից)
Ք.	գործ-ով (գործով)	գործ-ովք (գործերով)
Ն.	ի գործ (գործի մեջ)	ի գործս (գործերի մեջ)

Ե զ ա կ ի ր թ ի

Յոգնակի թիւ

Ուղղ.	սէր	գործել	որդի	որդիք
Ս.	սիրոյ	գործելոյ	որդւոյ	որդւոց
Տ.	սիրոյ	գործելոյ	որդւոյ	որդւոց
Հ.	զսէր	զգործել	զորդի	զորդիս
Բ.	ի սիրոյ	ի գործելոյ	յորդւոյ	յորդւոց
Ք.	սիրով	գործելով	որդւով	որդւովք
Ն.	ի սէր	ի գործել	յորդի	յորդիս

Ե զ ա կ ի ր թ ի

Ուղղ.	բնակեալ (բնակված)	եկեալ (եկած)
Ս.	բնակել-ոյ	եկել-ոյ
Տ.	բնակել-ոյ	եկել-ոյ
Հ.	զբնակեալ	զեկեալ
Բ.	ի բնակելոյ	յեկելոյ
Ք.	բնակելով	եկելով
Ն.	ի բնակեալ	յեկեալ

Յ ո գ ո ա կ ի ր թ ի

Ուղղ.	բնակեալք	եկեալք
Ս.	բնակել-ոց	եկել-ոց

Տ.	բնակել-ոց	եկել-ոց
Հ.	գրնակեալս	դեկեալս
Բ.	ի բնակելոց	յեկել-ոց
Գ.	բնակել-ովք	բնակել-ովքս
Ն.	ի բնակեալս	ի բնակեալսս

Ո հոլովման սեռականը կազմվում է ուղղականից ավելա-նալով և ձայնավորը. որից հետո դրվում է յ. բայց չի հնչվում (արտաբերվում): Հին գրաբարում յ կարգացվել է: Օրինակ՝ գործոյ—գործոյ, եկելոյ և այլն:

Ո հոլովման եզակի բացառականը չունի հատուկ վերջա-վորությունը. բացառականը նույն սեռականն է, միայն սկզբից ունի ի(յ) նախդիրը:

Գործիականը (եզակի) կազմվում է սեռականից ավելանա-լով Վ. բայց ոչ քեւ. որովհետեւ և ձայնավորի ևւ բազաձայնի թացությունը տալիս է ու ձայնավորը:

Եզակի ներգոյականը կազմվում է եզակի հայցականից ավելանալով ի կամ յ նախդիրը: Ի գործ. յոստ:

Ծանոթ.—Ո հոլովման ներգոյականը չի կազմվում սեռականից, որովհետեւ սեռականի վրա ավելանալով ի(յ) նախդիրը կազմում է բացառական (ի գործոյ, յոստոյ և այլն):

Ի վերջավորությունն ունեցող բառերի հոլովման ժամա-ժյուլ (որդի, որդի և այլն) եզակի սեռականում ավելանում է ւ անիկը. որդի—որդւոյ, պատանի—պատանւոյ, այս զեպ-քում ուղղականի ի, ձայնավորը դառնում է ք և դուրս է ընկնում. որդւոյ, պատանւոյ: Ը ձայնավորը արտաբերվում է, բայց չի զրվում:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ ԵՎ ՀՈՒՈՎՈՒՅՈՒՄԸ

Ո պարզ հոլովումով հոլովվում են ստացական, հարաբերա-կան բոլոր գերանունները, և անորոշ գերանուններից ԹՂ. միւս գերանունները և որոշյալ գերանուններից իւրաքանչիւր:

ա) Այս գերանունների հոլովման ժամանակ եզակի քրակամ հոլովն ունի հատուկ վերջավորություն—ուս, իսկ եզակի բացառականը կազմվում է քրակամից ստանալով և բնորոշիչը: Այս զեպքում տրականի ու ձայնավորը դառնում է ք և չի զրվում: Օրինակ՝

Տ. իւր-ում, իմ-ում, ալլ-ում, միւս-ում, մեր-ում ևն
Եզակի Բ. յիւրմ-ե, յ-իմմ-ե, յալլմ-ե, ի միւսմ-ե, ի մերմ-ե
(հյուրմէ, հիմմէ, յալլմէ, ի մյուսմէ, ի մերմէ) և այլն:
բ) Ներգոյական հոլով (եզակի) կազմվում է տրական հո-լովից: Օրինակ՝ ի մերում, յալլում:

ա) ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

իմ, քո, մեր, ձեր, սորայ, դորայ, նորայ, իւր, մերային, ձերային, իւրային

Ե զ ա կ ի ք իւ

Ուղղ.	իմ (իմը)	քո, քոյ (քոնը)	մեր	սորա (սրանը)
Ս.	իմ-ոյ (իմի)	քոյ քոյոյ	մերոյ	սորայոյ
Տ.	իմ-ում (իմին)	քում քոյում	մերում	սորայում
Հ.	զիմ (իմը)	զքո զքոյ	զմեր	զսորա
Բ.	յիմմ-է (իմից) ի քումմէ, ի քոյոյ	ի մերմէ ի սորայոյ		
Գ.	իմ-ով (իմով)	քով քոյով	մերով	սորայով
Ն.	յիմ-ում (իմ մեջ)	ի քում ի քոյում ի մերում ի սորայում		

Ուղղ.	իւր	ձերային
Ս.	իւրոյ	ձերայնոյ
Տ.	իւրում	ձերայնում
Հ.	զիւր	զձերային
Բ.	յիւրմէ	ի ձերայնոյ
Գ.	իւրով	ձերայնով
Ն.	յիւրում	ի ձերային

Յ ո զ ն ա կ ի ք իւ

Ուղղ.	իմք	քոյք (քոյ)	քոյք	մերք	սորայք
Ս.	իմոց	քոց	քոյոց	մերոց	սորայոց
Տ.	իմոց	քոց	քոյոց	մերոց	սորայոց
Հ.	զիմս	զքոյս	զքոյս	զմերս	զսորայս
Բ.	յիմոց ի քոց	ի քոյոց	ի մերոց ի սորայոց		
Գ.	իմովք քովք	քոյովք	մերովք սորայովք		
Ն.	յիմս ի քոյս	ի քոյս	ի մերս ի սորայս		

Ուղղ.	իւրք	ձերայինք	Բ.	յիւրոց	ի ձերայնոց
Ս.	իւրոց	ձերայնոց	Գ.	իւրովք	ձերայնովք
Տ.	իւրոց	ձերայնոց	Ն.	յիւրս	ի ձերայինս
Հ.	զիւրս	զձերայինս			

Այս օրինակով հղովմում են մյուս ստացական գերանունները:

ային վերջավորութունն ունեցող գերանունները տրականում չունեն օւմ վերջավորութունը, հղովմում են և հղովման բառերի նման:

Բ հարաբերական դերանուն

ՈՐ (ՈՐԻ)

Ուղղ. որ (որ)	որք (որոնք)	ձր	ձրք
Ս. որոյ (որի)	որոց (որոնց)	որոյ	որոց
Տ. որում (որին)	որոց (որոնց)	որում	որոց
Հ. զոր (որք, որին)	զորս (որոն, որոնց)	զոր	զորս
Բ. յորմէ (որից)	յորոց (որոնցից)	յորմց	յորոց
Պ. որով (որով)	որովք (որոնցով)	որով	որովք
Ն. յորում (որի մեջ)	յորս (որոնցում)	յորում	յորս

Որ հարաբերական գերանունը զրգելով հարցական նշանով արտահայտում է հարցական գերանվան իմաստ և հղովման ամանակ պահպանում նույն հղովմումը:

Որ հարաբերականը գործածվելով որպես հարցական գերանուն գոյականի հետ՝ միշտ զրգում է գոյականից նախադաս և ամաձայնում հղովմով և թվով: Բացի հոգնակի ուղղականից և յցականից:

Ուղղ. ձր քաղաք (ձր քաղաքը)	
Ս. ձրոյ քաղաքի (ձր քաղաքի)	
Տ. որում քաղաքի (ձր քաղաքին)	
Հ. զձր քաղաք (ձր քաղաքը)	
Բ. յձրմէ քաղաքէ (ձր քաղաքից)	
Պ. որով քաղաքաւ (ձր քաղաքով)	
Ն. յորում քաղաքի (ձր քաղաքում)	

Ուղղ. ձր քաղաքք (ձր քաղաքները)	
Ս. որոց քաղաքաց (ձր քաղաքների)	
Տ. որոց քաղաքաց (ձր քաղաքներին)	
Հ. զձր քաղաքաց (ձր քաղաքները)	
Բ. յորոց քաղաքաց (ձր քաղաքներից)	
Պ. որովք քաղաքաւք (ձր քաղաքներով)	
Ն. յձր քաղաքս (ձր քաղաքներում)	

Գ. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

Ս զ ա կ ի ք ի լ

Ուղղ. ալ (ուրիշ)	միւս, մեւս (մյուս)
Ս. ալոյ	միւսոյ (մյուսի)
Տ. ալում	միւսում (մյուսին)
Հ. զալ	զմիւս
Բ. յալմէ (հալմէ)	ի միւսմէ (մյուսից)
Պ. ալով	միւսով
Ն. յալում (հալում)	ի միւսում

Յ ռ զ ն ա կ ի ք ի լ

Ուղղ. ալք (ուրիշները)	միւսք (մյուսները)
Ս. ալոց	միւսոց (մյուսների)
Տ. ալոց	միւսոց
Հ. զալս	զմիւսս
Բ. յալոց	ի միւսոց
Պ. ալովք	միւսովք
Ն. յալս	ի միւսս (մյուսների մեջ)

Դ. ՈՐՈՇԵԱԼ ԴԵՐԱՆՈՒՆ

Ուղղ. իւրաքանչիւր (յուրաքանչյուր)	իւրաքանչիւրք
Ս. իւրաքանչիւրոյ	իւրաքանչիւրոց
Տ. իւրաքանչիւրում (յուրաքանչյուրում)	իւրաքանչիւրոց
Հ. զիւրաքանչիւր	զիւրաքանչիւրս
Բ. յիւրաքանչիւրմէ (հյուրաքանչյուրմէ)	յիւրաքանչիւրոց
Պ. իւրաքանչիւրով	յիւրաքանչիւրովք
Ն. յիւրաքանչիւրում (հյուրաքանչյուրում)	իւրաքանչիւրս

Այսպես հղովմում է երկուսից (երկուսից ամեն մեկը):

Ո հղովմիցով հնչովում են՝

ա) Մի շարք բառեր՝
աթոռ, ամիս, (ամսոյ), արմատ, փող, գլուխ, բերան, մարդ, մուր (մարոյ), սուզ (սզոյ), ամպ, հողմ, ցորենան (ցորենոյ), զեռ, մորթ և այլն:
բ) Այն բառերը, որոնք ուղղականում ունեն հետևյալ վերջավորութունները՝
ային — ծովային (ծովայնոյ), մարդկային, գիշերային և այլն:

ԻՈ—վերին (վերնոյ), ներքին, արտաքին, յետին, ստորին, առաջին (առաջնոյ) և այլն.

աժ—յօգուած, (հազված), դիպուած, յաւելուած, աստուած (աստուածոյ, աստուածով=հեթանոսական իմաստով և աստուած, աստուծոյ=քրիստոնեական իմաստով, որ հոգնակի չունի):

ցի—գիւղացի, քաղաքացի, գանձակեցի, հեղինացի (գիւղացւոյ, գանձակեցւոյ) և այլն.

ուճ—անասուն (անասնոյ), դիտուն, մնայուն, զուարթուն (զվարթուն) և այլն.

զ) բոլոր անորոշ գերբայները՝ խաղալ, աղալ, սիրել, թողուլ (թողլոյ), բնակիլ (բնակելոյ), հեղուլ (հեղլոյ, հեղով), և այլն.

անորոշ գերբայները հոգնակի թիվ չունեն.

դ) բոլոր անորոշ գերբայները՝ բնակեալ, զարմացեալ, ասացեալ, զարմացեալ (զարմացելոյ, զարմացեալք, զարմացելոց) և այլն:

Եւ վերջավորութեան եւ մասնիկը սեռականում և նրանից կազմված հոլովներում գառնում է և. (զարմացեալ=զարմաց-ե-ւ-լոյ) և այլն.

ե) մի օտր հասուկ անուններ՝ Կարին, (Կարնոյ), Շապուհ (Շապուհոյ), Անի (Անուոյ), Վռամշապուհ, Թաթուլ (Թաթլոյ) և այլն.

զ) մի շարք անհոգնակի անուններ՝ ցուրտ (ցրտոյ), սոթ, սեւա (սեւոյ), արդար (արդարոյ), հանութ (հանրոյ) և այլն.

է) մի շարք անհոգնակի բառեր՝ հայր (հայրոց, հայրովք), ռոտմը, ծայր (ծայրոց), կուրծք (կրծոց), դժոխք (դժոխոց) և այլն.

ը) մի շարք անհոգնակի բառեր (որոնք հոգնակի չունեն)՝ լոյս (լուսոյ), յոյս (հույս) յուսոյ), սէր (սիրոյ), պատիւ (պատիւով)—պատուոյ, հարաւ, հիւսիս և այլն.

